

էր: Ասոնք քահանաներն ու ժողովուրդը հետերնին առած՝ կայսեր գացին, բողոքեցին Գր. Պատրիարքի անիրաւ զրկանքներուն եւ անյագարծաթմսիրութեանը դէմ, եւ մեծ ճգամբ յաջողեցան զԳր. Կեսարացի գահընկէց ընել, եւ 1612ին, Պատրիարք ըլլալէն 6—7 ամիս ետքն, իր տեղը ճամբեցին:

Յետոյ Ս. Աստուածածին եկեղեցին գացին, Պատրիարքութիւնն երեքի բաժնեցին. Զաքարիան գլխաւոր դրին, աթոռն Ստամպոլ «բնական պարաթին հին ղապալայի երկրովքն», Անատոլի «փարաքանդան» եւ Ռոտոսթոն (Ըռատօզ, Թէքիրտաղ) Գր. Վ. Դարանաղցւոյն տուին. իսկ Յովհ. Վ. Խուլին՝ «զամենայն Ուռումէն բայց յԸռատօզուս»: Զաքարիա Ստամպոլ նըստաւ, միւսներն իրենց տեղը գացին նստան:

Սկայն Կեսարացին հանգիստ չկեցաւ. գրգռեց Սոյ կաթողիկոսն (Յովհ. Գ. Անթապի 1602—1622) Կարնեցի Մինաս Վ.ը, եւ «զքացախ Մինաս Վ.ն որ յետ Յովհաննէսին նա յաջորդեաց զաթոռ կաթողիկոսութեանն» (Թէպէտ ըստ ցուցակաց Մինաս Կարնեցի է յաջորդը 1622—1626: Յակոբ Կարնեցի (Ժէդար, հրար. Կ. Կոստանեանց, Վլըշպտ. 1903) կը գրէ (էջ 12). «Յեզնկա... է դամբարան... Կիլիկիոյ Մինաս կաթողիկոսին, որ մականուամբ Բացախ կոչուր, զի տեսաք աչօք մերովք եւ լուաք զդասս եւ զքարոզութիւն նորա ի քաղաքս Արզրում, եւ գնացեալ Եզնկայ էառ վախճան Ռ2Ա (= 1632) Թուին եւ եդեալ կայ ի